

«Գրիգորիս Ազթամարցիի» միջնադարյան հայ տաղերգուների մատենաշարի 6-րդ գիրքն է: Ավգայրեղյանը այս մատենաշարի երկու գրքերի աշխատասիրողն է (առաջինը՝ «Խաչատուր Կեղանցի»): Թեպետ վերևում արգեն

եշել ենք, նրա այս աշխատասիրությունը, անկասկած, հանգիստեում է կարևոր ավանդ՝ Գրիգորիս Ազթամարցու գործունեության լուսաբանման ասպարեզում:

Գ. ՄՈՒՐԱԳՅԱՆ

Լ. Գ. ԽԱՉԵՐՅԱՆ, Գրչության արվեստի լեզվական-քերականական տեսությունը միջնադարյան Հայաստանում, ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1963 թ., 405 էջ, գինը 1 ա. 52 կ.

Թեև հրապարակի վրա կան միջնադարյան հայ քերականագիտական մտքի զարգացման քննադատ լուսարանող արժեքավոր ուսումնասիրություններ, որոնց մեջ շոշափվել ու այս կամ այն չափով պարզարանվել են նաև գրչության արվեստին վերաբերող որոշ հարցեր, սակայն գրչության արվեստի լեզվական-քերականական տեսության մի շարք խնդիրներ կա՛մ բոլորովին քննության շեն առնվել, կա՛մ էլ քննության են ենթարկվել սուսկ հարևանցիորեն, ոչ բավարար խորությամբ: Երա, իհարկե, հասկանալի է, քանի որ վերոհիշյալ հարցերի պարզաբանումը այդ աշխատությունների բուն նպատակից դուրս է եղել:

Միջնադարյան Հայաստանի գրչության արվեստի լեզվական-քերականական տեսության պատմության համակողմանի քննությանն է նվիրված Լևոն Խաչերյանի «Գրչության արվեստի լեզվական-քերականական տեսությունը միջնադարյան Հայաստանում» մենագրությունը: Այն բաղկացած է ներածությունից և երկու մասից: Ներածության մեջ (էջ 10—52) պարզաբանվում են գրչության արվեստի լայն ու նեղ լմբոնումները և նրա ստեղծման պատմական անհրաժեշտությունը: Գրչության արվեստի լեզվական-քերականական տեսության առաջագումն հեղինակը պայմանավորում է մի քանի հանդամանքներով.

ա) գրարարի հնչյունական համակարգի զարգացմամբ ու փոփոխությամբ, միջին հայերենի զգալի հեռացումով նրա դասական վիճակից.

բ) հայ ժողովրդի պահպանման ու հարատևման գործում գրի ու գրականության՝ իրեն պայքարելու կարևոր գործոններից մեկի, խաղացած դերով.

գ) բնագրերի վրա գրիչների կատարած բանասիրական աշխատանքով:

Հեղինակը իրավացիորեն ավելի կարևոր է համարում վերջին հանգամանքը: «Հենց բանասիրական աշխատանքի (ֆիլոլոգիայի) արդյունքը հանգեցրեց գրչության արվեստի վե-

րաբերյալ հատուկ աշխատությունների երևան գալուն»,— գրում է նա (էջ 22—23):

Աշխատության առաջին մասում, որտ բուն ուսումնասիրությունն է (էջ 55—218), քննության են առնվում գրչության արվեստի լեզվական-քերականական տեսության ականավոր ներկայացուցիչներ Արիստակես Գրչի, Գևորգ Սկևոացու, մեկնիչներ Գրիգոր Տաթևացու և Անանունի հայացքներն ու բմբոնումները և մանրամասն վերլուծվում նրանց աշխատանքները:

Ծիշտ գնահատելով Արիստակես Գրչի գործունեությունը, Խաչերյանը նրան համարում է գրչության արվեստի լեզվական-քերականական տեսության հիմնադիրներից մեկը, XII դարի նշանավոր քերական և հայերեն առաջին ուղղագրական բառարանի հեղինակ: Իր «Վերլուծությունը բացերևապէս բազմազան բառից և բայից յոգնախումբ շարադրութեամբ արարեալ զուս Արիստակիսի Գրչի ի խնդրոյ բազմաց յարձեստ գրչութեան» աշխատության մեջ Արիստակես Գրչը նպատակ է ունեցել վերացնել թույլ տված աղավաղումներն ու սխալ գրչությունները. նա նկատի է ունեցել հատկապես գրիչներին, որոնք պետք է հմտանան գրչության արվեստի կանոնների մեջ, իմանան բանաստեղծական տողերի դասավորության կարգը, բարդ նախադասությունների, պարբերությունների կամ վերտառությունների արտագրման եղանակը, նրանց շաղկապումը միմյանց: Արիստակեսը գրիչների առաջ խնդիր է դրել թափանցել գրվածքի բովանդակության մեջ, բացահայտել նրա էությունը և նոր միայն ձեռնարկել նրա արտագրությունը: Չեռագրերը ծիշտ բնորոշակելու համար նա գրիչներից պահանջում էր ուսումնասիրել գրչության արվեստին նվիրված աշխատությունները, իրազեկ լինել գրչության կարևոր խնդիրներին, կատարելագործվել քերականության մեջ և վարպետորեն կիրառել առողանության ու բացահայտության նշանները, ծիշտ և գեղեցիկ բաժանել

գլխագրերը և այլն: Այս բոլորը վկայում են, թե ինչպիսի ծանրակշիռ ու լուրջ խնդիրներ էին ծառայել Արխատակեսի առաջ, որոնց լուծումը հրատապ էր դարձել գրչության արվեստի զարգացման համար: Այստեղ հանգամանորեն պարզարանվում են Արխատակեսի հիշյալ աշխատության մեջ ամփոփված 10 կանոնները (դրանցից 9-ը ուղղագրական ընույթի են), բացահայտվում յուրաքանչյուրի էությունը, հիմնավորվածությունը, ժամանակին խաղացած դերը, ալև պակասավոր կողմերը: Խաչերյանը իրավացիորեն նկատում է, որ Արխատակես Գրիչը հայերենի ուղղագրական յուրաքանչյուր երեւույթ բացատրելիս չի բավարարվում սոսկ նրկարագրման արտաքին եղանակով՝ միայն բառերի ներսում թերման ժամանակ կատարվող հնչյունների փոփոխությունները արձանագրելով, Ընդհակառակն, նա հայերենի քերականական օրենքներով ու կառուցվածքային առանձնահատկություններով է հիմնավորում յուրաքանչյուր փոփոխություն ուղղագրության մեջ: Այդ հանգամանքն առավել էս բարձրացնում է նրա աշխատության գիտականությունը և այն վերածում ուղղագրական-քերականական ձեռնարկի:

Արխատակեսը չէր հանդուրժում բառերի գրության խայտարղետությունն ու անկանոնությունը. որոնք մեծ մասամբ արդյունք էին նաև գրիչների բարբառային տարրեր պատկանելության: Մյուս կողմից՝ նա չէր ուզում, որ խղում առաջանա դասական հայերենի թողած մշակութային հարուստ ժառանգության և ներկայի մասավոր արդյունքների միջև: Այդ երկու գործունեները, նշվում է քննարկվող աշխատության մեջ, նրան տրամադրեցին հօգուտ այն բանի, որ հայերենի գրությունը ընթանա ավանդականի կանոնների ու նորմաների համաձայն: Այդ պատճառով էլ Արխատակեսն սկսեց առավել հանգամանորեն ու խոր ուսումնասիրել և բացահայտել դասական հայերենի ուղղագրական օրինաչափությունները և գրչության արվեստը իր ամբողջ տեսությունը կառուցել այդ սկզբունքների մշակման ու վերլուծության հիման վրա:

Եթե Արխատակեսի աշխատության վերը նշված 9 կանոններում նկարագրված է հայերենի ուղղագրական տեսությունը, ապա 10-րդ կանոնում տրված է այդ տեսության գործնական կիրառությունը: Այն նախատեսված է իրրև ձեռնարկ գրիչներին օգնություն ցույց տալու համար: Այդ ձեռնարկը, որն ուղղագրական ընույթի բառարան է, ստեղծվեց մի քանի նախադրյալների թելադրմամբ: Իրրև այդ նախադրյալներից մեկը գրախոսվող աշխատության մեջ նրչվում է այն հանգամանքը, որ այդ ժամանակ-

վա գրական լեզուն՝ միջին հայերենը գործածում էր դասական հայերենում շեղած բառեր, իսկ դասական հայերենի շատ բառեր դադարել էին գործածվելուց և դուրս էին եկել շրջանառությունից: Բայց քանի որ հայ գրիչները մտահողված էին հայերենի մշակութային հուշարձաններն ու գանձերը պահպանելու խնդրով, ուստի նրանք արտագրում է բազմացնում էին դասական շրջանին վերաբերող ձեռագիր աշխատանքները: Ըսկ դա նշանակում էր, որ նրանք մշտապես գործ էին ունենում այնպիսի բառերի հետ, որոնք XIII դարում կորցրել էին իրենց կենսունակությունը, հետևաբար և նրանց բառային իմաստը մթագնվել էր և գրիչների կողմից կարող էր շահակացվել ու շփոթվել նույնանուն այլ բառերի հետ: Բացի դրանից, որպես նախադրյալ նշվում է նաև հայոց լեզվի մի շարք բարբառների աննախընթաց զարգացումն ու բուռն վերելքը: Արխատակեսի բառարանը, ըստ է. Խաչերյանի, աչքի է ընկնում նաև երկու կարևոր հատկանիշով.

ա) այն ոչ միայն ուղղագրական, այլև բացատրական բառարան է. հաճախ բերված բառերի կողքին տրվում են նրանց բացատրությունն ու իմաստային առումները.

բ) հարուստ է քերականական դիտողություններով, որոնք կարևոր են հեղինակի քերականագիտական հայացքները ընթացքով և ըստ արժանվույն գնահատելու համար (տե՛ս նրա մետ գրաբարի դիմավոր բայաձևերի ընթացքումը, մի շարք փոխառյալ բառերի ստուգաբանությունը, համանուն բառերի իմաստային տարրերությունների պարզարանումը և այլն):

Այստեղ, իրրև եղրակացություն, մատնանրչվում է, որ Արխատակես Գրիչը հիմք դրեց բանասիրական պրպտումների և փորձի վրա ընդհանրացված լեզվական-քերականական տեսության, որը մեր մատենագրության մեջ հայտնի է «գրչության արվեստ» արտահայտությամբ: Նա մշակեց և գիտականորեն ձևակերպեց հայերենի ուղղագրական կանոնները, տվեց հայերենի ուղղագրական բառարանի առաջին նմուշը և հայոց լեզվի օրինաչափություններն ուսումնասիրելու համար ինքնուրույն լեզվական-քերականական աշխատության օրինակ, ձերբազատելով հայ քերականական միտքը մեկնողական ընույթի քերականական երկերի կաշկանդումներից:

Աշխատության 99—171 էջերը նվիրված են XIII դարի հայ նշանավոր քերական Գևորգ Սկեռացու գործունեության քննադրմանը, գրչության արվեստի վերաբերյալ նրա արտահայտած մտքերի վերլուծությանը: Ստված լինելով գրչության արվեստի բարձր կուլտուրայով և գեղարվեստական բացառիկ շնորհքով,

Սկեռացին հմուտ է եղել նաև հայերենի տաղաչափության արվեստին ու խազագրության ուսմունքին:

Նշվում է, որ Արիստակես Գրչից հետո Սկեռացին այն քերականն է, որը մշակել է կանոնավորել է հայոց լեզվի գրադարձության, վանկատման, ուղղագրության, կետադրության և առոգանության նորմաները: Նախքան Սկեռացու երեք աշխատությունների՝ «Երատ վասն հանգամանաց հեգից», «Երատ վասն առոգանութեանց», «Երատ յաղագս գրչութեան արուեստի» քննությունը, տրվում է առոգանության, կետադրության և վանկատման տեսության առաջացման ու զարգացման հիմնավորումը: Իրեն գլխավոր պատճառ ու նախադրյալ ընդգծվում է գրության տառաձևերի փոփոխությունը անցումը երկաթագրից բոլորգրի, որի գործածությունը էլ հենց մատենագրությունը անցնում է բառանշատ գրության ձևին, ուստի գրչները բնականաբար սկսում են ավելի պարզ ու հստակ պատկերացնել բառերի ու բառակապակցությունների ձևարանական ու շարահյուսական հարաբերությունները, բարդ նախադասությունների բաղադրիչ մասերի ստորադասական և համադասական հարաբերությունները, պարզ նախադասությունների արտահայտած եղանակային տարրեր ընդհանր և այլն: Այստեղից էլ բխեցվում է հայերենի վանկատման, տողադարձի, առոգանության և տրոհության նշանների առաջացումն ու նրանց դրույթների մշակումը: Խաչերյանը ճիշտ է նկատում, որ Սկեռացին իր ուսմունքը շարադրելիս չի սահմանափակվում սկզբունքների ու կանոնների սոսկ թվարկումով, այլ պատճառարանում և հիմնավորում է դրանք քերականական հարակից տվյալներով ու երևույթներով, հայոց լեզվի քերականական ներքին օրինաչափությունների համաձայն: Անդրադառնալով «Խուստ վասն հանգամանաց հեգից» աշխատությանը, նա մատնանշում է, որ այնտեղ քննվում են գրադարձության սկզբունքները և շարադրվում այն կանոնները, որոնցով պետք է առաջնորդվեն գրչները ձևագրելն ընդօրինակելիս, ցույց է տալիս նաև, թե Սկեռացին հայերենի վանկատման ինչպիսի կանոններ է սահմանում և մանրամասնորեն քննում է այդ կանոններից յուրաքանչյուրն առանձին-առանձին:

«Խուստ վասն առոգանութեան» աշխատության քննության կապակցությամբ նշվում է, որ Սկեռացին առոգանությունը բնութագրում է որպես «աբուսուս ընթերցողութեան» և այդ տերմինի տակ նա հասկանում է ինչպես ինտոնացիայի, այնպես էլ բացահայտության նշանները, ըստ այդմ էլ նա ընդունում է 10 նշաններ (շեշտ, բութ, պարույկ, երկար, սուղ, թավ,

սոսկ, ապաթարց, ենթամնա, ստորատ), դրանք յամբավորելով առոգանության շորս սեռերի մեջ (ոլորակ, ամանակ, հագագ, կիրք): Ցուցադրելով Սկեռացու բնութագրերը այդ նշանների վերաբերյալ, Խաչերյանը նկատում է, որ այդ հարցում զգացվում է հունարենի հնչյունական համակարգի առանձնահատկությունների մեխանիկական վերադրում հայերենին: Նա գտնում է, որ ամանակի տեսությունը, իր բնագրության պատճառով, շտաբաժվեց հայ քերականագիտության մեջ, սուղը՝ կարճ առհասարակ, իրեն նշան, մոռացվեց, իսկ Երատը փոխեց իր սկզբնական նշանակությունը (ժամանակային տեղություն իմաստը) և ձեռք բերեց այլ ֆունկցիա՝ վերածվելով բացականչական նշանի:

Այստեղ բացատրվում է, թե ինչու առոգանության ուսմունքը ճանապարհ չէր գտնում դեպի մատենագրություն, դեռևս ձեռք չէր բերում գործածության լայն ծավալ մեր ձեռագրական մշակույթի ընդհանրապես: Այդ հանգամանքը պատճառարանվում է նրանով, որ առոգանության ուսմունքը քերականական աշխատություններում վերացական տեսական բնույթ էր կրում, քանի դեռ այն բնութագրվում էր իրեն ինտոնացիոն տարրեր նշանների տեսություն, հար և նման հունարեն լեզվի ինտոնացիոն առանձնահատկություններին: Նրանք միայն այն ժամանակ են կիրառություն ստանում, երբ վերախմաստավորվում և բնութագրվում են իրեն բացահայտության, բացականչության և տրոհության նշաններ: Այստեղից էլ՝ հակասություն տեսության և գործնական կիրառության միջև: Բայց այդ հակասությունը Խաչերյանը համարում է բնական և անխուսափելի, գտնելով, որ առոգանության տեսությունը, ամբողջությամբ վերցրած, չէր համապատասխանում հայոց լեզվի հնչարտարբերության էությունը, չէր բխում նրա առանձնահատկություններից: Իրեն եզրակացություն նշվում է, որ Սկեռացին, լրացնելով իր անմիջական նախորդի՝ Արիստակես Գրչի դրույթները, ամբողջացնում է գրչության արվեստի լեզվական-քերականական տեսությունը և առաջ քաշելով նոր հարցեր, ստեղծում ամբողջական ուսմունք գրադարձության արվեստի», այսինքն՝ վանկատման, տողադարձի, կետադրության, մասամբ նաև առոգանության վերաբերյալ:

Այնուհետև անդրադառնալով Գրիգոր Տաթևավացու մեկնողական ընդհանր աշխատություններին, է. Խաչերյանը ցույց է տալիս, որ նա Արիստակեսի և Սկեռացու գրչության արվեստին նվիրված ուսումնասիրությունները մեկնելիս առաջնորդվում է փիլիսոփայական տրակտատների մեկնարանման ու վերլուծման եղա-

նակով, շատ հարցեր ձգտում է բացատրել փիլիսոփայական-աստվածաբանական գրույթներով ու բմբռնումներով, որի պատճառով էլ այդ հարցերը քննում է ոչ թե առնչակից բոլոր ինգիլիզների հետ, իրրե մի ամբողջական պրոր-լեմ, այլ անջատարար, ուստի դրանց շլուծումներն էլ համառոտակի բնույթ են կրում և լիակատար չեն: Ցույց է տրվում նաև, որ Տաթևացու մոտ քերականական հասկացությունները հաճախ նույնանում են տրամաբանականի հետ, այսինքն՝ խստորեն սահմանազատված չեն քերականությունն ու տրամաբանությունը:

Աշխատության առաջին մասի վերջում լուսարանվում է Անանուի գործունեությունը, վերլուծվում է նրա աշխատության «Առաստակիսի բառագրոցն քաղեալ և այս վասն լծորդութեան» հատվածը, որն ունի որոշ ինքնուրույնություն՝ նյութի խմբավորման ու նպատակասլացության տեսակետից: Անանույր Արիստակեսի բառարանի մեկնությանը վերաբերող հատվածում քննում է հիմնականում քաղաձայն հնչյունները՝ լծորդության տեսակետից: Անանույր լծորդությունների վրա թափանցում է միասնարար մի խմբում քննում բոլոր այն բառերը, որոնց մեջ քաղաձայն հնչյունները լծորդ են հնչյունական տարրեր որակի կողմից, իսկ դանանակում է, որ նա ուղղագրական կանոններ է սահմանում նաև հայերենի քաղաձայնական սխառմի կիրառման համար:

Աշխատության մեջ հեղինակն անդրադառնում է նաև գրչության արվեստի մասին գրիչների ունեցած կարծիքներին: Եթե գրչության արվեստը սկզբնապես նշանակել է գեղեցիկ, տառ առ տառ, համաշափ մեծությամբ գրելը, առանց, սակայն, լեզվական-քերականական երեվույթների մեջ թափանցելու, ապա հետագայում այն դառնում է գիտության հատուկ բնագավառ, որը շատ բարձր է գնահատվում և որի նկատմամբ գրիչները պատկառանք, սեր ու ակնածանք էին տալիս: Այստեղ նշվում են այն պատճառները, որոնց հետևանքով XVI դարից հետո գրչության արվեստը կորցնում է նախկին նշանակությունը և կամաց-կամաց իր դիրքերը զիջում տպագրության արվեստին: Հեղինակը

էզրակացնում է, որ եթե գրչության արվեստը իր հնագրական նշանակությամբ անցյալի գիրկըն է անցնում, ապա իր լեզվական-քերական նշանակությամբ սեփականություն է դառնում նաև տպագրության արվեստի համար և հետագայում լրացվում ու ամբողջացվում է մեր գրավոր մշակույթի զարգացման պահանջներին համաձայն:

Երբի երկրորդ մասը (էջ 227—380) բնագրերն են. այստեղ ներկայացված են վերոհիշյալ հեղինակների 10 աշխատանքները և երկու փոքրածավալ աշխատանք, որոնք առաջին անգամ են հրատարակվում:

Խաչերյանի այս ուշագրավ աշխատանքը զերծ չէ, սակայն, մասնակի թերություններից ու անճշտություններից: Նշենք դրանցից մի քանիսը.

ա) Աշխատությունը շափազանց ծանրաբեռնրված է մեջբերումներով: Գրեթե յուրաքանչյուր պատահ կամ անպատեհ առիթով այս կամ այն միտքը հիմնավորելու համար մեջբերումներ են կատարվում վերը նշված հեղինակների աշխատանքներից. մի բան, որի կարիքը չի զգացվում, մանավանդ որ դրբի երկրորդ մասում ներկայացվում են այդ հեղինակների բնագրերը:

բ) Նկատվում են ձգձգված մասեր, կենսագրական ավելորդ տեղեկություններ և շեղումներ բուն նյութից: Երբեմն շեղվելով առաջադիր հարցի ուսումնասիրությունից, հեղինակը տարվում է այս կամ այն երևույթի պատմական զարգացման քննությամբ (տե՛ս առ երկրարրառի պարզեցման և օ-ի վերածվելու բացատրությունը և այլն), որից բնդհատում է առաջանում շարադրանքի մեջ և տուժում է աշխատության ամբողջականությունն ու տրամաբանական սերտ կապը: Կան նաև սխալ հղումներ և վրիպակներ:

Երախոսվող աշխատությունը օգտակար կարող է լինել մայրենի լեզվի ուսուցիչների, ուսանողների, հայագետների և առհասարակ հայ մշակույթի պատմությամբ զբաղվողների համար:

Հ. ՕՂԱՆՅԱՆ